



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 6**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2021 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ ԱՌՑԱՆՑ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***Օրակարգում՝***

1. Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
2. 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի սկսման հետ կապված հարցեր:
3. Ս./թ. ապրիլին Հայ բարեգործության ընդհանուր միության համագործակցությամբ կայանալիք «Հակոբ Կարապենց» գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 37 անդամներից նիստին մասնակցում է 28-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ին հարցի** առթիվ հաշվետվությամբ հանդես եկավ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահ Բ. Գ. դ., պրոֆ. Գայանե Գևորգյանը: Նա մասնավորապես ասաց, որ 2020-21 ուստարում «Հայոց

լեզու» առարկայից մագիստրոսական թեզ է պաշտպանել 3 ուսանող՝ ժամանակակից հայոց լեզվից:

Մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքներն են՝

մեկ ուսանող ստացել է «20» միավոր, մեկ ուսանող՝ «19» միավոր, մեկ ուսանող՝ «17» միավոր:

2020-21 ուստարում «Հայ գրականություն» առարկայից մագիստրոսական թեզ է պաշտպանել 2 ուսանող՝ հայ նորագույն գրականությունից:

Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներն են՝

մեկ ուսանող ստացել է «19» միավոր, մեկ ուսանող՝ «18» միավոր:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, որը կազմակերպվել էր առցանց, անցել է գործող ընթացակարգին համապատասխան:

Ավարտական մագիստրոսական թեզերն իրենց բովանդակային, կառուցվածքային ու կատարողական առումով հիմնականում համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Աշխատանքներում, ըստ ներկայացվող պահանջների, հստակ նշված էին աշխատանքի կատարման նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը:

Բոլոր ուսանողները ներկայացրել էին նաև պահանջվող լուսապատկերային ցուցադրությունը:

Պաշտպանությանը մասնակցած ուսանողներն ընդհանուր առմամբ ունեին անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ, կարողանում էին պատշաճ ներկայացնել ուսումնասիրությունը, ըստ անհրաժեշտության՝ պատասխանել հանձնաժողովի հարցերին:

Ուսանողների մասնագիտական գիտելիքներն ընդհանուր առմամբ համապատասխանում էին պահանջվող մակարդակին: Աշխատանքների թեմաներն արդիական էին, վերաբերում էին լեզվաբանական և գրականագիտական տարբեր խնդիրների, որը բազմազան ու հետաքրքիր էր դարձնում աշխատանքների պաշտպանության ընթացքը:

Աշխատանքների գիտական և տեխնիկական որակը, ուսանողների պատրաստվածության աստիճանը վկայում էին, որ նրանց ղեկավարները և համապատասխան ամբիոններն իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով:

Գնահատելի է նաև ընդդիմախոսների կատարած աշխատանքը: Գրախոսությունների մեջ հստակ նշված էին թեզերում առկա որոշ վրիպակներն ու թերությունները, արված էին տեղին առաջարկություններ, որոնք հետագայում գիտական աշխատանք կատարելու դեպքում կօգնեն ուսանողներին ճիշտ կողմնորոշվել:

Որպես ընդհանուր թերություն՝ ցանկանում ենք նշել այն, որ որոշ դեպքերում աշխատանքներում նկատվում էր վերլուծականության պակաս: Ցանկալի է, որ ուսանողները իրենց կարծիքներն ավելի հստակ ու հանգամանորեն ներկայացնեն, վստահ լինեն, մասնագիտական գրականության մեջ եղած կարծիքներին համաձայն չլինելու դեպքում չկաշկանդվեն: Կարծում ենք՝ այդ հարցում նրանց պետք է կողմնորոշեն ու օգնեն գիտական ղեկավարներն ու մասնագիտական ամբիոնները:

Այս պաշտպանությանը ներկայացված թեմաները, ինչպես նշվեց, բազմազան էին և սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն էին ընձեռում: Կարծում ենք, որ հետագայում էլ ամբիոնները կշարունակեն հանձնարարել այնպիսի թեմաները, որոնց կատարման ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան բացահայտելու իրենց ունակությունները:

Մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը, որն առցանց էր կազմակերպված, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում ընթացավ պատշաճ մակարդակով. պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի ղեկանի և ղեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին:

Օրակարգի **2-րդ հարցի** (2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի սկսման հետ կապված հարցեր) մասին հաղորդումներով հանդես եկավ ղեկանի տեղակալ դոց. Ա. Մարգարյանը: Նա մասնավորապես նկատեց, որ արդեն տրված է 2-րդ կիսամյակի դասերի մեկնարկը. որոշ կուրսեր դասերն անցկացնում են առկա, այդ թվում՝ գործնական պարապմունքները, իսկ որոշ կուրսեր դասաժաներն անցկացնում են առցանց համակարգով:

Հարցի առիթով դեկան պրոֆ. Ա. Ավագյանը նկատեց, որ վիճակն առհասարակ վատ է առցանց դասավանդման դեպքում. ուսանողների մի մասը շատ հաճախ միանում է համակարգին և զբաղվում այլ գործերով, մի մաս էլ ընդհանրապես չի մասնակցում՝ նախընտրելով ավագի հետ «բանակցություններ» վարել և ներկա ստանալ:

Ֆակուլտետի դեկանը հույս հայտնեց, որ հավանաբար մեկ ամսից համավարակը հիմնականում կնահանջի, և դասերը կընթանան բնական հունով:

**Օրակարգի 3-րդ՝ 2021 թ. ապրիլին Հայ բարեգործության ընդհանուր միության համագործակցությամբ կայանալիք «Հակոբ Կարապենց» գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների հարցի** մասին հաղորդումներով հանդես եկան թե՛ պրոֆ. Ա. Ավագյանը և թե՛ ամբիոնների վարիչները: Նշվեց, որ Հակոբ Կարապենցը, ճիշտ է, երևելի գրող է, այնուամենայնիվ նրա երկերը կարոտ են նաև լեզվաբանական տեսանկյունից լրջմիտ քննության, և անհրաժեշտ է, որ կայանալիք գիտանստաշրջանին հայ գրականության ամբիոնների հետ իրենց մասնակցությունն ունենան նաև լեզվի բոլոր ամբիոնները:

### **ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝**

**ԼՍԵՑԻՆ** – Հայ բանասիրության ֆակուլտետում անվանական կրթաթոշակների հատկացման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, դոց. Ա. Սարգսյանը: Նշվեց, որ 2020-21 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով 4-րդ կուրսի ուսանողներ **Գոհար Գագիկի Վահանյանը** (ԵՊՀ-ի անվան կրթաթոշակ), **Վարդուհի Արտաշեսի Բարսեղյանը** (Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ), **Մերի Աթաբեկի Հունանյանը** (Մեսրոպ Մաշտոցի անվան կրթաթոշակ) և **Աշոտ Մկրտչի Մկրյանը** (Գրիգոր Նարեկացու անվան կրթաթոշակ) պահպանել են գերազանց առաջադիմությունը և անվանական կրթաթոշակ ստանալու իրավունքը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով նշվածը՝ առկա ուսուցման 4-րդ կուրսի վերոնշյալ ուսանողներին երաշխավորել կրթաթոշակ ստանալու:

**ԼՍԵՑԻՆ** - Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթի ներկայացվող «Արդի արևելահայերենի ուսումնական քերականական

բառարան» (ղեկավար՝ Բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Յու. Ավետիսյան) թեմայի եզրակացության վերաբերյալ հարցը:

Նշվեց, որ «Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան» թեման արդիական է և անհրաժեշտ մի շարք առումներով:

1. Արևելահայ գիտական քերականությունն ունի հարուստ պատմություն: Ստեղծվել են հարյուրավոր հիմնարար ուսումնասիրություններ, սակայն, ի տարբերություն տեսական աշխատությունների հարուստ բազմազանության, մեզանում չի գործել ձևաբանության գործնական, մասնավորապես բառարանային ամրագրման եղանակը:

2. Նշված թեմայի շրջանակում աշխատանքային խումբը նպատակ ունի կազմելու «Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան», որը կառուցվածքային և բովանդակային առումներով նորություն կլինի հայ բառարանագրության մեջ, գործնական առումով՝ պահանջված:

**ա)** Ամենատարբեր ոլորտներում՝ սկսած վարչագործարարականից մինչև ՋԼՄ-ներ կամ առօրյա հաղորդակցում, անընդհատ են ծագում հարցեր բառի ձևակազմական այս կամ այն փոփոխության վերաբերյալ, որոնք, սակայն, մնում են անպատասխան գուտ այն պատճառով, որ տվյալ պահին որևէ մենագրություն, ձեռնարկ, ուղեցույց և կամ բառարան հասանելի չէ. ձևի որոնումը ընդհանուր տեսական շարադրանքներում դյուրին չէ և խիստ ժամանակատար է: Ստեղծվելիք բառարանն ունի մեծ պահանջարկ և բանասիրական շատ բառարանների նման ծառայելու է համընդգրկուն լսարանի:

**բ)** Ուսումնական ձևաբանական բառարանը մեծ պահանջարկ ունի նաև-բարձրագույն մասնագիտական շրջանակներում և հանրակրթության ոլորտում: Այն կլինի յուրօրինակ տեղեկատու՝ բառի ձևաբանական հատկանիշները ճշգրտելու, գրավոր խոսքը քերականորեն ճիշտ կառուցելու համար: Հավասարաչափ գործածելի կլինի և՛ ուսուցանողի, և՛ սովորողի համար. գործնականում, անշուշտ, շատ ավելի հարմար է ձևաբանական անհրաժեշտ միավորը որոնել՝ ճշգրտել՝ առանց տեսական ծավալուն «միջամտության»:

**գ)** Արդի արևելահայերենի ձևաբանության համակարգում կատարվել են էական տեղաշարժեր, որոնք արտահայտված են գրեթե բոլոր ենթահամակարգերում (հոլովում, հոգնակիակազմություն, խոնարհում, խոսքիմասային անցումներ և այլն), և որոնց վերաբերյալ կա՛մ անդրադարձներ չկան, կա՛մ դրանք մեծ մասամբ հասանելի են նեղ մասնագիտական շրջանակներին, քանի որ ամփոփված են գիտական հոդվածներում, մենագրություններում: Այս բառարանը ի մի է բերելու նաև ձևաբանական այն փոփոխությունները, որոնք արտացոլված են կենդանի լեզվում,

կանոնական դրսևորումներ են և լեզվի արդի փուլի զարգացման ու մշակման տեսակետից օրինաչափ դառնալու միտում ունեն: Այս իմաստով՝ հարցի ուսումնասիրությունը և դրա արգասիք հանդիսացող բառարանը մեծապես կնպաստեն գրական արևելահայերենի քերականության մշակմանն ու նորմավորմանը:

**դ)** Ծրագրի բարեհաջող ավարտից հետո խումբը նախատեսում է քերականական բառարանի էլեկտրոնային տարբերակը տեղադրել բաց շտեմարաններում՝ ապահովելու համար դրա անխոչընդոտ հասանելիությունը:

Խմբի գիտական ղեկավարն է պրոֆ. ր. գ. դ. Յու. Ավետիսյանը, անդամները՝ դոց., դոց Ա. Սարգսյանը, Լ. Սարգսյանը, հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Լ. Ծատուրյանը. նրանք պարբերաբար զբաղվել են հարցի քննությամբ, բուհական և դպրոցական դասագրքերի համահեղինակներ են, ունեն գիտական տարաբնույթ ուսումնասիրություններ և ի զորու են պատշաճ իրականացնելու իրենց առաջադրած թեման: Նշվեց, որ պրոֆ. Յուրի Ավետիսյանի ղեկավարությամբ արդեն 2 անգամ իրականացվել են թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրեր, որոնց շրջանակում խումբը հասել է զգալի արդյունքների՝ հրատարակելով կոլեկտիվ մենագրություններ, հոդվածներ, զեկուցումներ: **Առաջին**՝ 2015-2017 թթ. թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված ծրագրի արդյունքում նրա ղեկավարությամբ տպագրվել են 1 մենագրություն, 1 ժողովածու, 1 կոլեկտիվ մենագրություն, 9 հոդված, 2 զեկուցում: **Երկրորդ**՝ 2018-2020 թթ. գիտական ծրագիրը խումբն ավարտել է հետևյալ արդյունքներով՝ 2 կոլեկտիվ մենագրություն, հոդվածների 1 ժողովածու (գիտաժողովի նյութեր), 7 գիտական հոդված և 3 զեկուցում: Անշուշտ, սա նոր ծրագիր է, որը ենթադրում է գիտական գործունեության նոր մեթոդաբանություն, սակայն նշված ցուցանիշները անկասկած երաշխիք են խմբի արդյունավետ գործունեությանը վստահելու: Ուստի առկա են անհրաժեշտ հիմքերը «Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան» թեման գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթի ներկայացմանը երաշխավորելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաշվի առնելով նախագծի բովանդակությունը, նպատակները և նախագիծը իրականացնող խմբի մասնագիտական որակները՝ «Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան» թեման (ղեկավար՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Յու. Ավետիսյան) **երաշխավորել** ներկայացնելու գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին:

**ԼՄԵՑԻՆ** - Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին ներկայացվող «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառա-

պաշարի զարգացման և տերմինաշինության աղբյուր» (ղեկավար՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Աբաջյան) թեմայի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը:

Նշվեց, որ «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի զարգացման և տերմինաշինության աղբյուր» թեման հույժ արդիական է և ունի բազմակողմ տեսագործնական կարևորություն:

1. Գիտական թեմայի իրագործման ծրագրի հիմնանպատակն է բացահայտել 21-րդ դարում հին հայերենի՝ գրաբարի դերը և ներուժը արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման մշտակա գործընթացում: Գիտության և քաղաքակրթության զարգացման ներկա փուլում արդի արևելահայերենի՝ իբրև պետական լեզվի, առջև լրջագույն մարտահրավերներ են՝ մշակելու տարբեր ոլորտների նոր հասկացությունների հայերեն համարժեքներ: Այդ համարժեքների մեծագույն մասը 5-րդ դարից մինչև 18-րդ դար գրաբարով վկայված ինքնուրույն և թարգմանական գրականության բառապաշարային միավորների բառակազմական և իմաստաբանական կաղապարների նորագույն զարգացման օրինակներ պետք է լինեն, որոնք անհրաժեշտ է դասակարգել և շտեմարաններում ամրագրել՝ համագործածական դարձնելու համար: Գիտական թեմայի իրագործումը կանոնարկված ու համակարգված կդարձնի գրաբարյան բառերի նոր կիրառությունների մշակումն ու ամրակայումը արդի արևելահայերենում և՛ տեսական մենագրության, և՛ շտեմարանի տեսքով:

2. Նախագծի իրականացումը ոչ միայն նպաստելու է արդի արևելահայերենի ընդհանուր բառապաշարի, այլև հատկապես տերմինաբանության համակարգային հարստացմանը: Վերջին տարիներին հայերենի տերմինաբանության խնդիրները ինքնահոս զարգացման են մատնված, և հստակ պահանջ կա բացառելու տերմինային համակարգում ձևավորվող հոմանշությունը, բազմիմաստությունը: Տերմինաշինության ոլորտում հստակ պահանջների և կառույցների մշակումը, դրանց իմիթերումը տարբեր բառացանկերում, շտեմարաններում էապես արդյունավետ կդարձնի հայ գիտնականների, դասախոսների և ուսուցիչների, ուսանողների և աշակերտների աշխատանքը:

Արդյունքների հնարավոր կիրառություններով նախագիծը կարող է նպաստել՝

**ա)** գրաբարյան բառապաշարային միավորների գործուն կիրառությանը արդի արևելահայերենում՝ իմաստային համապատասխան փոփոխություններով,

**բ)** հայերենի հումանիտար և ճշգրիտ գիտությունների տերմինահամակարգերի հստակեցմանը,

զ) պետական լեզու հանդիսացող հայերենի ոլորտային կիրառությունների ընդլայնմանը և ազդեցության բարձրացմանը՝ համաշխարհային զարգացումներին համահունչ:

դ) պետապաշտոնական, գիտակրթական և գեղարվեստական, ինչպես նաև ընդհանուր հաղորդակցության բանավոր ու գրավոր մակարդակներում հայերեն խոսքը առավել գրագետ, բովանդակալից և ազդու դարձնելուն :

Կարևորվեց նաև այն հանգամանքը, որ խմբի անդամները ի գորու են իրականացնելու իրենց առջև դրված խնդիրը: Նրանք պարբերաբար զբաղվում են հարցի քննությամբ, հանդես են գալիս հողվածներով, համահեղինակային աշխատանքներով: Նշվեց, որ նախորդ՝ 2018-2020 թթ. թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված ծրագրի արդյունքում հեղինակային խումբը՝ պրոֆ. Ա. Աբաջյան, դոց. դոց. Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, որին միացել է երիտասարդ դասախոս Ս. Կարապետյանը, ունի 1 կոլեկտիվ մենագրություն, 17 հոդված, 5 զեկուցում: Այս իրողությունը լուրջ հիմք է հանդիսանում «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի զարգացման և տերմինաշինության աղբյուր» թեման գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթի ներկայացմանը երաշխավորելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաշվի առնելով նախագծի բովանդակությունը, նպատակները և նախագիծը իրականացնող խմբի մասնագիտական որակները՝ «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի զարգացման և տերմինաշինության աղբյուր» թեման (ղեկավար՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Աբաջյան) **երաշխավորել** ներկայացնելու գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին:

**ԼՍԵՑԻՆ** – Ամբիոնի վարիչ, պրոֆ. Յուրի Ավետիսյանի «Հայագիտության գուգահեռականներում» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Թ. Տոնոյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ գիրքը պրոֆ. Յու. Ավետիսյանի շուրջ 30-ամյա գիտական գործունեության համապարփակ ժողովածուն է: Գրքում զետեղված են ՀՀ գիտական պարբերականներում տարբեր տարիներին լույս տեսած հոդվածներ, որոնք վերաբերում են հայագիտության այլևայլ հիմնախնդիրներին՝ արևելահայ գրական լեզվի նորմավորման խնդիրներ, արևմտահայերենի մշակման, զարգացման և պահպանման հարցեր, Սփյուռքի հայկական դպրոցների դասագրքերի մշակման և կազմության սկզբունքներ, հայագիտական ձեռքբերումների գնահատում և վերարժևորում: Գիրքը արդիական է և արժեքավոր քննվող հարցերի շրջանակով ու վերլուծություններով, կարևոր նշանակություն ունի ինչպես հայագիտության, մասնավորապես հայերենագիտության արդի հիմնա-



խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանակների համար: Գրքի խմբագիրն է բ. գ. թ., դոցենտ Աշոտ Աբրահամյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ պրոֆ. Յուրի Ավետիսյանի «Հայագիտության գուգահեռականներում» գիրքը երաշխավորել տպագրության:

**ԼՍԵՑԻՆ** – Պրոֆ. Ժ. Քալանթարյանի՝ «Ժամանակների միջով, ժամանակի հետ» ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը և Ա. Տեր-Մինասյանը:

Նրանք նշեցին, որ պրոֆ. Քալանթարյանի՝ «Ժամանակների միջով, ժամանակի հետ» ժողովածուն ընդգրկում է գրականագիտական տարաբնույթ հոդվածներ, որոնք լուրջ ներդրում են հայ գրականագիտության մեջ: Հոդվածների մի մասն արդեն տպագրվել է տարբեր պարբերականներում և ժողովածուներում, մյուս մասը տպագրության է ներկայացվում առաջին անգամ: Ժողովածուում ամփոփված են ինչպես գրականության պատմությանն ու տեսությանը նվիրված ուսումնասիրություններ, այնպես էլ ժամանակակից գրական ընթացքին վերաբերող հոդվածներ, որոնք ցույց են տալիս գրականագետի հետաքրքրությունների լայնությունն ու բազմերանգությունը:


Ժողովածուի վերաբերյալ առկա են պրոֆ., պրոֆ. Մ. Ջանփոլադյանի և Ալ. Մակարյանի երաշխավորող կարծիքները, խմբագիրն է պրոֆ. Վ. Գաբրիելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Պրոֆ. Ժ. Քալանթարյանի՝ «Ժամանակների միջով, ժամանակի հետ» ժողովածուն երաշխավորել տպագրության:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**



**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**